ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա «27» մարտ 2024թ.

**ՈՐՈՇՈՒՄ No. 353-Ա**
**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

**ՊԱՐԶԵՑԻ**

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 8551/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ (Հասցե ք.Երևան Արցախի փ., 34/2-2 ՀՎՀՀ 23310565, ՀԾՀ՝ 2909940527) չկատարված հարկային պարտավորությունը 27.12.2023 թվականի դրությամբ կազմել է 2.662.308 դրամ, որից հարկ՝ 2.430.000 դրամ, տույժ՝ 232.308 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 27.02.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից տեղեկատվության համաձայն՝ Ֆիզիկական անձ ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ հանդիսացել է Մարզ Կոտայք, համայնք Առինջ Խ.Աբովյան թաղամաս 4-րդ փողոց 11 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատող, վերջինիս կողմից նշված հասցեի բնակարանները հասցեավորված է որպես բնակելի տներ, սակայն հարկային մարմնում առկա փաստաթղթերի, իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի օտարման գործարքներ:

Ֆիզիկակակն անձ Էդգար Կիրակոսյանի կողմից 31.10.2022թվականին օտարվել է Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Առինջ Խ.Աբովյան թաղամաս 4-րդ փողոց 11/5 հասցեի անշարժ գույքը 12.150.000 դրամ պայմանագրային արժեքով:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 145-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձին օտարման դեպքում օտարված շենքի կամ տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտը հաշվարկվում է գործարքի փաստացի գնից ելնելով, իսկ գործարքի գնի բացակայության կամ գործարքի գնի՝ Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից 80 տոկոսից պակաս դեպքում՝ դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով:

Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում բազմաֆունքցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող (համարված) ֆիզիկական անձի կողմից շենքի , դրա բնակարանների, շինությունների(այդ թվու՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականության հանդիսացող ոչ բնակելի տարածքների) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները:

Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 11-րդ կետի կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Ֆիզիկակա անձ ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ կողմից չի ներկայացվել 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկամ հաշվարկ և չի վաճարել եկամտային հարկի գծով պարտավորությունը:


0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է **2.662.308** դրամ, որից հարկի գումար 2.430.000 ՀՀ դրամ, տույժ 232.308 ՀՀ դրամ:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Ֆիզիկական անձ ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՑ գանձել **2.662.308** ՀՀ դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

**27.12.2023թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ**

**Չափման միավորը՝ դրամ**

| Հ/Հ | Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը | Հաշվարկված հարկ/վճար | | Հաշվարկված տույժ | Հաշվարկված տուգանք | Ընդամենը | Վճարման ուղղությունը | Հաշվի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջացման ամսաթիվ | գումար | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7= 4+5+6 | 8 | 9 |
| 1 | Եկամտային հարկ | 01.05.2023թ. | 2.430.000 | 232.308 | | 2.662.308 | պետական բյուջե | 900008000490 |

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում, կամ ՀՀ վարչական դատարան:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ լիազոր անձի անուն ազգանուն ամսաթիվ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի առաջատար
մասնագետ Արեգա Պարսեղյան
հեռ.010 30/9191 /9136/